Զ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 1 ՓԵՏՐՎԱՐ 1903 — ԹԻՒ 489

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վարնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse
(Autriche) W. 4. Vienne

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցեին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՏԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այսօր «Շարժումը» թեւակոխում է իր վեցերորդ տարին։ Ուրեմն հինգ տարիներ անցան նրա գոյութեան օրից. բայց որչափ ծանր տարիներ. . . . Այս հինգ տարվան մէջ «Շարժումը» հաւատարիմ մնաց իր նշանաբանին և ծրագրին. կռիւ մղեց արտասահմանում ապաստանած այտոտ, ստոր, կեղծ և ագէտ տարրի դէմ, պաշտպան հանդիսացաւ յեղափոխութեան, զբաղվեց յեղափոխական տարրի դժուարին ճամբու վրա գտնված փշերը, տատասկները. քարերն ու այլ խոչնդոտները մաքրելու գործով և դեռ պէտք շարունակի մաքրել։

Հինգ տարի առաջ, երբ մի խումբ երիտասարդներ որոշեցինք «Շարժումը» հրատարակել մեր աղտոտ, յեղափոխութիւնը թունաւորող տարրի դէմ պայքարելու համար, չէինք կարծում թէ մեր առջեւ այնքան ծանր գործ կայ. այնքան ծանր, որը կարող էր վհատեցնել. բայց հէնց առաջին տարիների փորձը ցոյց տուեց մեզ որ ցածութիւնը, վատութիւնը, կեղծիքը մեր երեւակայածից աւելի խորն էր թափանցել մեր ժողովրդի զանազան խաւերի մէջ և տիրապետել նրանց հոգիներին ու սրտերին։ Մենք մեզ գտանք սպանիչ իրականութեան առջեւ և, փոխանակ թուլանալու, հաստատ որոշումը տինք մաքառել մեր բոլոր ուժերով, մեր բոլոր եռանդով այն աղտոտ երեւոյթների դէմ, որոնք կատարվում էին կը լանելու այն, ինչ որ հայութեան յոյսը և պարծանքն է կազմում։

Որոշումին հետեւեց կատաղի պայքարը. ազգային սուտ գործիչներ, բարձր դիրք վայելող կեղծ ազգասէրներ, ժողովրդի արիւնը ծծող աշխարհական և կղերական սուտ ղեկավարներ, ստրկական անբարոյականացնող ազգային յատկանիշ դարձած մոլութիւններ ենթարկվեցին «Շարժումի» անգութ հարուածներին։ Շարէ շար իրարու ետեւից «Շարժումի» հարուածների տակ ընկան յուտ հեղինակութիւնները, տապալվեցին այնբարձրութիւններից ուր հանել էր նրանց խաւարի գերի, մանկան պէս շուտ խաբվող հայ ամբոխը։

Հինգ տարվայ մէջ «Շարժումը» դարձաւ մի մտրակ, որ պրտրտվեց աչ ու ձախ հալածելով այն ամենը ինչ որ վնասակար էր մեր ազատագրութեան, մեր վերածնութեան գործին։ Ու ամեն մէկը, ով որ հանրային գործի մէջ ուզում էր դեր խաղալ կամ խաղում էր, ճիգեր թափեց «Շարժումի» հարուածներից ազատ մնալու, կամ երբ ստացաւ ուզեց անուշի կապել, իր սխալ քայլերը ուղղել. ով ընդունակ էր ուղղվեց, ով ընդունակ չէր տապալվեց, ոտքի տակ ընկաւ։

«Շարժումը» հինգ տարվան գոյութեան շրջանի մէջ, իր հարւածողական ուղղութեան միշտ հաւատարիմ մնալով. չը խնայեց ոչ հարուստին, ոչ իշխանին, ոչ բարեկամին։ Սկզբունքի առջեւ զոհվեցին ամենքը, որովհետեւ խմբագրութեանս հաստատ համոզումը և հաւատամքն է՝ թէ հանրութեան օգտի համար աշխատող մամուլը անգութ պէտք է լինի դէպի ամեն մի անհատ, որը ոեւէ քայլով կամ գործով վնաս է հասցնում հանրութեան։

Այս ուղղութեամբ «Շարժումը» կարողացաւ դիմանալ. ոչ միայն դիմացաւ, այլ միշտ բարեկամներ, աջակիցներ ու զոհողութեան պատրաստ համակիրներ գտաւ։ Շնորհիւ այդ համակիրների, այդ զոհողութեան և աջակցութեան պատրաստ բարեկամների էր որ «Շարժումը» չընկաւ իր մղած կատաղի պայքարի մէջ և երբէք դժբախտութիւնը չունեցաւ կոմպրոմիսների մէջ մտնելու։ Հպարտ է երեւոյթ մեր մամուլի, մանաւանդ արտասահմանի հայ մամուլի կեանքի մէջ։ Եւ այդ երեւոյթն է միայն մեր վարձատրութիւնը, որովհետեւ մեզ համոզում է թէ իսկապէս մենք կարողացել ենք որոշ չափով օգտակար գործ կատարել ու «Շարժումը» իսկապէս դոյութեան իրաւունք ունի մեր կեանքի մէջ։

Այսօր «Շարժումը» մտնում է ամեն տեղ, ուր որ հայ կայ։ Երիտասարդ մտաւոր և յառաջադէմ ուժեր գուրգուրալով են վերաբերվում դէպի մեր թերթը, որում կարող է հիւրասիրվել ամեն մի անկեղծ, կորովի, թարմ և յառաջադէմ միտք։ Մենք միշոց չունենք որ վարձատրենք այդ մտաւոր ուժերին, և երբէք էլ յոյս չունենք հարստանալու. որովհետեւ ոչ ամբոխի քմահաճոյքին հետեւելու և ոչ հայ դրամատէրերին շոյելու տրամադրութիւնը ունենք։ Մենք թերթը հիմնել ենք աշխատելու և հանրութեան օգտին ծառայելու համար ու յուսով ենք որ մեզ համակրող երիտասարդ մտաւոր ուժերը կըմբռնեն այդ և կը շարունակեն իրենց աջակցութիւնը հանրութեան օգտակար լինելու համար։

ՎԱՐԴՕ

ՄԻ ՊԱՏՄՈՒ ՀՈՏՑ ՄԻ՛ ԿՏՈՐ ԵՐԿԱ՛Թ

Հայրենիքի վիրաւոր, արիւնլուայ հողին մէջ ճնշուած, խեղդուած ձայնով հայութեան վիրջին մնացորդը, մի՛ պատառ հա՛ց մի կտոր երկա՛թ կաղերսէ ...։ Արեան ծով դարձած այդ երկրին մէջ դիակները անթաղ. մեռելները անհանգիստ, կենդանիները մահ կը սպասեն. բայց հոն միայն կարելի է ունենալ հայու վերակենդանութեան մեծ յոյսը...

Հայու բազմաչարչար երկիրը, ուր կեանքը ապահով չէ, ուր արիւն ու արտասուքը դադար չունի, ուր մայրը իր հոգեհատորի օրօրոցը արիւնոտ կը գտնէ, ուր գիշերը արհաւրապատ, ցերեկը սարսռալի է. ուր արեւը ամոյն կը ծագի, ուր լուսինը աղօտ կը ծնի, ուր արշալոյսը սգոտ կը բացուի... ուր թշնամին կատաղած, անկուշտ մեր արիւնով հայութեան բնաջնջումը կը պատրաստէ. բայց պէտք է գիտնալ որ հոնէ դարձեալ հայու ապագան...

Ո՞վ սորվեցուց մոռացութեան մատնուած հայութեան այն դժբաղդ մասին, ամուր կառչած մնալ հայրենօճախի սիւներուն եւ կամ աւերակներու վրայ նստած, արտասուալի աչերն յառել հեռո՛ւն, հեռո՛ւն հորիզոնի անորոշութեան ծայրին եւ միշտ յուսալ...

Ոչ ոք,

Նոքա՝ սարերի, լեռներու այդ անտաշ տղաները՝ բնութեան անքարդախ զաւակները, հայրենիքի հատընտիր զինուորները՝ բնազդօրէն հաւատացած են այդ մեծ յոյսին...

Եւ որքա՞ն խորունկ է այդ հաւատը,

Շղթայի ժանգոտ չառաչը, մահացցերի արիւնոտ ճօճումը, բանտի մահառիթ օդն, արիւնարբու դրացիների նողկալի երեսը, թշնամու ոճրագործ սուրը ու այդ ամէնը, երբէ՛ք, երբէք ապերախտութեան չեն հասցնելու հայրենիքի այդ կենդանի նահատակներուն...

Որքա՞ն խորունկ է այդ հաւատը:

Ցուրտ է դուրսը, ձիւնախառն փոթորիկը լեռները կը սարսեցնէ... արտ ու այգի, սար ու ձոր թուխպ է պատած. ոտքին մաշած տրեխով, հալաւը պատառատուն... բնութեան այդ սառկտրող պահուն դուրս կուգայ հայ ֆէդային չտապ ու անյոդոդոդ քայլերով. զինուորի ամբողջ դիւցազնութեամբ, պարտագիտակցի խորին համոզմամբ...անբաւական ռազմամթերով, հրացանը ուսին, վերջին պաշիկ կուտայ ցրտէն դողացող իւր հոգեհատոր զաւակին.., Դուրս կուգայ ան, ո՛վ գիտէ գուցէ ա՛լ չըվերադառնալու պայմանաւ...։ Զբաղած գուրգուրացող ծնողք, սիրող կին եւ հոգւոյն մօտ զաւակը... գիտակցորէն է որ կուտելու կերթայ ֆէդային. պաշտպանելու աւելի խեղճ ու իր բազկին, իր օգնութեան կարօտ եղբայրակցին ...։

Հայրիկ՝ ինձի պատառ մը հաց բեր կը թոթովէ սիրուն երեխան... Ա՛խ եթէ կտոր մը երկա՛թ ալ ես ունենայի կը մտնչէ խեղդուած ձայնով երիտասարդ եղբայրը ...։ Կերթայ ֆէդային առանց ետեւ նայելու, արտասուքի, կամքէն անկախ, հոսած չիթը. ամօթ կը համարի սրբելու իւր երեսէն...

* * *

Իսկ ի՞նչ կրնէ արտասահմանի հայութիւնը հանդէպ այն դիւցազնական քաջերուն որոնք հայրենի ազա-

տագրումի զոհաբերութեան կատաւորներ եղան ու մնացին։ Եւ ահա պատկերը այժմեան պրտասամանեան հայութեան։

Փճացած երիտասարդութիւն մը. ենթարկուած միջավայրի մեղկ ազդեցութեան. գոհ է իւր ներկայ կեանքով, երջանիկ է բոզերի ծոցին մէջ. Մոռցած է ամէն բան. հայրենիք. ծնողք՝ կրօնք ու ազգութիւն. գոհ է հոս. ի՞նչ փոյթ իրեն թէ հոն իւր մայրը բռնաբարուած, իւր քոյրը լկուած, իւր եղբայրը մորթուած, իւր ալէզարդ հայրը շամբրուած...ի՞նչ փոյթը այդ ամէնը, գոհ է արտասահմանի հայ երիտասարդութիւնը բոզերի գրկին մէջ...

Գոհ են եւ արտասահմանի հայ մայրերն ու աղջիկները իրենց նոր շրջազգեստով, մօտայի սեղմիրանով ու գունաւոր թաթպանով։ Երեսնուն ներկ ու բուարա, ձեռքերնուն վիոլէթ ու կլեսկին, իրենց ամենամեծ մտածումը կը կազմէ... երբէք նախնի հայ դիւցազնուհիներու սերունդէն եղած լինին կարծես. ժանտախտների անէծքի արժանի այդ նազելի խաթունները հայերէն խօսիլ իրենց ամօթ կը սեպեն, եւ օտար շրջանի մէջ ամէն ճիգ կը թափեն հայ ըլլալնին ծածկելու...

Իսկ պուրժուան՝— անոր դերը պաղմական է։ Ի՞նչու յեղափոխութեան օգնէ. մատուռ ու եկեղեցի կը չինէ որ անունը մնայ.—լ՛ անունդ թող չմնայ։ Կամ ան ալ չէէր։ Իրականութիւնը չտեսնել կը կեղծէ ազգային վրայ յոյս ունենալ չուզեր. հեռանկարի չհաւատար ու բոլոր անձնուիրական գործերը սրիկայական կանուանէ, նահատակներ կը հայհոյէ. սրբազան չիրիմները կանարգէ, նուիրական նշխարներ ոտքի տակ կուտայ.—միմիայն քսակին բերանը չբանալու համար...։

Արծիւ Արծրունի

Զէրին Եգիպտոս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սալմաս Յունուար 9

Եթէ՞ չեմ սխալուիր շատերին յայտնի է, թէ Սալմասի հայերը սկսեալ 1891 թ. ինչ դեր են խաղացել հայկական յեղափոխութեան առթիւ մինչեւ հիմա։

Սալմասը գտնվելով պարսկա-թրքական սահմանագլխին մօտ, որ տեղից հեշտութեամբ կարելի էր երկիրը մտնել, մանաւանդ այդ գաւառում գտնվում են մեծ թուով հայեր աւելի քան 10,000, այդ յարմարութիւնները աչքի առաջ ունենալով յեղափոխականները աւելի այդ տեղ կենտրոնացան, քան թէ Պարսկաստանի ուրիշ մասերում։

Բայց բաւական չէր այդ յարմարութիւնները, այլ ամենագլխաւորն այն էր որ Սալմասի հայերը ինչպէս վերեւում յիշեցինք մօտիկ լինելով դըժոխային երկրին և այն տեղից լավող իրենց հարազատ եղբայրների լաց ու կոծին կրդաքաց սիրով ընդունեցին յեղափոխականներին և ո՛չ մի կերպով չ'խնայեցին օգնել նրանց այդ սուրբ գործի համար։

Եթէ մաերամանօրէն գրելու լինինք Սալմասցիների արած ծառայութիւնը յեղափոխութեան՝ երկար կը լինի և միեւնոյն ժամանակ ձանձրալի ընթերցողներին, բաւական է միայն յիշել մի օրինակ, որը պարզ կերպով ցոյց կտայ Սալմասցիների ինչ աստիճան աղնիւ վերաբերմունքը դէպի յեղափոխութիւնը։

Չեմ կարծում որ ո՛չ մի հայանատի ծանօթ չը լինի Դաշնակցականների 97 թ. Խանասորի արշաւանքը. երբ նա քիչ թէ շատ հետաքրքրվել է իր ազգային ցաւերով։

Մեկ բոլորիս յայտնի է, որ Սալմասում պատրաստվեց արշաւանքին վերաբերեալ ամեն ինչ, այդ մասին չեմ կարող գրչի զօրութեամբ արտայայտել Սալմասցիների ոգեւորութեան չափը և նրանց մատուցած ծառայութիւնը. երեւակայեցէք որ ամբողջ հինգ ամիս ամեն մի տուն 3-4 զինուոր էր պահում մինչև արշաւանք գնալը. բացի ուտելուց հագուստեղէն չունեցողին հագուստ, ծխախոտ և նոյն իսկ զէնք և եղան տեղացի երիտասարդներ որոնք մասնակցեցին էլ արշաւանքին։

Բայց աւա՛ղ. այդ բոլոր լաւութիւնների փոխարէն մի շարք բաղդախնդիր պարոններ ընդհակառակը վարվեցին, ամեն ինչ ոտնատակ տուին. չերեւակայած եղեռնագործութիւններ, աւազակութիւններ արին և նոյն իսկ ընտանեկան սրբութիւնը պղծելով յեղափոխութեան վարկը գցեցին Սալմասցիների աչքից և այսօր իրենց գործերի համար տեղացիներից «Ենիչէրի» անուն են ստացել։

Անհրաժեշտ եմ համարում մէջ տալ բերելու այդ ենիչէրի կոչուածների սիքանիսի արարքը։ Սրանց մի մասը Հաֆթուան գիւղումն է գտնուում իրենց գաճաճ խմբապետովը. «Արմենական» անուան տակ. Մէկը ճարպիկ խաչագող, երկրորդը՝ հմուտ դաւաճան, իսկ երրորդը՝ կեղծ մուրհակներ չինող, որպէսզի աւելի ազնիւ կերպով հարստահարէ ժողովրդին։

Այո՛ ասացի նախ խաչագող, ահա՛, թէ ի՞նչպէս։ Այդ պարոններից մէկը մի շարք զուր սպանութիւններով և աւազակութիւններով չ'կշտանալով, նախ՝ իբրեւ ուսուցիչ այդ գեղին, կլանում է ուսումնարանի տոկոսով տրուած փողերը և միեւնոյն ժամանակ գրադարանապետ գրագարանի 70 թուման (140 ռուպլի) պատրաստի դրամագլուխը և աչքի ընկնող գրքերն է յափշտակում։ Բայց սրանք ոչինչ, տեսնում է, որ նոյն գիւղի եկեղեցին բաւականաչափ հարուստ է հնութիւններով, ոսկեղէն և արծաթեղէն անօթներով։ Սրանք ձեռք դցելու համար քահանայ է ձեռնադրվում, չը նայած որ «խոնարհեցո-ւպրեցոյից» մինչեւ անգամ տեղեկութիւն չ-ունէր»։ Զանցած մի տարի բացի վերոյիշեալ բաները այլ և Աւետարանների վերայ գտնուած խաչերն անդամ պոկում է. ժողովրդի համբերութիւնը ծայրահեղութեան հասնելով զուրս է վռնտում այդ նոր Նիկոլին, բայց ինչ օգուտ, բանը-բանից անցել էր արդէն։ Բայց դէպի այդ խնդիրը, պէտք է ասել, որ գ/ւղացիքը չատել չ'նեղացան, այլ ներողամտութեամբ վարեցին. քանի որ իրենք էլ մի ժամանակ ուրիշների խաչերն էին գողացել և այդ պէտք է ասել, որ վրէժ լուծեց։

Իսկ երկրորդը՝ որ ամենասարսափելին է, սրա ընկերը՝ կանչում է իւրայիններին և աւետիս է տալիս, թէ տղերք վաղը մեր Սուլթանի ծննդեան տայեղարձի օրն է, և հիւպատոսը (Շահպանդարը) մեզ հրաւիրել է պէտք է գնանք նրա տունը, և ուրախութիւն անենք։

Յաջորդ օրը. 12 հոգու չափ հիւպատոսարան են գնում, սկսում են կոնծել Սուլթանի կենացը և գոհաբանական ճառեր խօսել ու պար բռնել։ Դուք ինքներդ ասեցէք խնդրեմ, թողած յեղափոխական լինելը մի կողմ, ո՞ր ամենավատ հայը իրեն թոյլ կտայ մինչ այդ աստիճան ստորանալ. ուրեմն այդպիսիները չէ թէ, յեղափոխականներ են, այլ յեղափոխութեան անունը՝ պղծողներ, գաւաճաններ. մի խօսքով ազգային ցեցեր։

Իսկ երրորդը՝ իմանալուն պէս, որ մի նոր պանդուխտ է եկել, իսկոյն պատրաստում է մի կեղծ մուրհակ և տալիս է կառավարութեան. պաշտօնեաները հաստատում են և ուղարկում, թէ քո բացակայ եղած տանը հայրդ 80 ռուբլի փող է պարտք առել և պէտք է տաս, ստիպված կէսը վճարում է կամ ամբողջը, որ ազատվում է։

Մի խօսքով Սալմասցիների դրութիւնը անտանելի է. ոչ ոք չի ուզում մի դարման տանել. յուսահատված և չը կարողանալով տանել այդքան զրկանքներ, կամաց-կամաց գաղթում են Ռուսաստան, և մի օր պիտի տեսնենք, որ Սալմասում այլեւս ոչ մի հայ չիկայ և եղածներն էլ ուղղակի խոչնդոտներ պէտք է լինին, և տաճկաց կառավարութեան վաղուց կազմած ծրագիրը պիտի իրագործվի և Սալմասի հայերը բնաջինջ կը լինեն բոլորովին։

Ներկայումս միայն ուրախալի մի բան կայ Սալմասցիների համար։ Դաշնակցութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել այդ սանկիւլոտներին (անվարտիկներին) հեռացնելու Սալմասից և հակառակ պարագային տէռորի ենթարկելու տեսնենք. Ինչպէս կը լինի։

ԳԱՐԵԳԻՆ

ՀԱԼԱԾՈՂ «ԱՊՐՕ»ՆԵՐՈՒՆ

Շարժումի անցեալ շաբաթ օրուան (18 յունվար) թիւին մէջ կեղծ անուան տակ կծկտողի յարձակողականը կարդացի, անձի։ եւ դպրոցիս դէմ ուղղուած։

Ցաւանի է թէ՝ «Ապրօ»ին հետ վիճել մեր պաշտօնին եւ սկզբունքին չը վայելեր. բայց հասարակութեան միաքը պղտորող այդ տեսակ թուղթեր գրութիւններ ա՛լ չափը անցան. համը փախցուցին։

Շատ ուրախ եմ Ապրօ որ դիս կը հալածէք, սակայն կը ցաւիմ ձեր եւ ձեր արբանեակներուն բռնած ընթացքին համար։ Ի՞նչու այդքան վատթարանանք. ինչո՞ւ նախանձի գեւը մտնէ մեր մէջ. Ապրօ՛։ Ինչո՞ւ կը փնտռենք մեր շահերը ուրիշի կոստեան մէջ։ Ի՞նչ սարսափելի դիւահարութիւն. խարտոց լլզե՛լ. լիզու ուտե՛լ։ Թիշենք յաւէտ, Ապրօ, որ կիրքը մեզ կը ճիւաղացնէ եւ այն ատեն ազգին թոքը կը ծող, ուտող մանրէներ կը լլլանք։

Դեռ չէ՞ք գիտեր Ապրօ որ՝ ծաղրել, խծբծել, ծամածռել, հաչհոյել, պարսաւել, հետեւաբար՝ ստել փտած նկարագրի կը վերաբերին։ Բարին խորհողը այս բաներէն կը հեռանայ։ Բայց Ապրօ՝ ինչո՞ւ չը համաձակեցար, ճակատդ բաց, անուանովդ մատկանունովդ հրապարակ ելլելու։ Մեղք չէ՞ քեզի որ կեղծ անուան մը տակ պահուըտելու կ'երկչոտիս։

Իմ եւ դպրոցիս վրայ յարձակելով, ի՞նչ պիտի չահիք. Ո՞ր դպրոցին արդեօք պաշտպան կանգնած էք։ Ապրօ՛, պարապ տեղը միտքդ դրիր քո բողոքականութիւն հալածելով մեր դպրոցը հարուածել. ի՞նչ է բողոքականութիւնը. ի՞նչ են ասոր տուած եւ տալիք ճնշաներ. եթէ կրնայիր հայ հասարակութեան առջեւ գնել իմաստասիրութիւն մը՝ այս մասին, հաւանական է մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայիր ազգին։

Ահա ազատ Պուլկարիոյ մէջ, օտարին հողին վրայ, կը հալածէք ձեր արիւնակիցները. որովհետեւ ձեզմէ տարբեր համոզում ունին կրօնքի եւ քարոյականութեան վրայ։ Եթէ Ապրօ՛, վայը ձեռքերնիդ անցնի ազատ Հայաստանը, այս ընթացքով ինչե՞ր պիտի չընէք ձեզմէ տարբեր խորհողներուն դէմ։ Կարծեմ թէ նախ եւ առաջ պիտի փակէք հայ Ս. Եւանգելական բոլոր գօլէճները եւ բարձրագոյն վարժարանները, որոց մէջ տասնեակ հազարներով հայեր եւ հայուհիներ կրթուած են ու կը կրթուին։ Այդ սրբավայրերուն մէջ դասախօսած են ու կը դասախօսեն ձեզ անարեկող պատուելիները որոնց ուրուականը մինչեւ անգամ ձեր հանգիստը կը վրդովէ. մանաւանդ տանց սիլինար գլխարկները...։

Կա՛յ «գաղափարի ազատութիւն» պոռացող կեղծ գիտնականներուն կեղծ աշակերտները. եթէ չէք գիտեր, հարկ է գիտնալ որ. ոչն ու նախանձը հաւու մը բոյն անգամ չեն կրնար չինել, ո՛ւր մնաց Հայաստանը վերականգնել։

Իսկ գալով ձեր շարժառիթին՝ ինձ համար յայտնի է սա։ Մրցիլ չը գիտցողը կռուիլ կը սորվի. ան որ չը յառաջանար, խոչնդոտ մըն է արդէն իսկ։ Պէտք է բացէ՛ ի բաց ըսել ձեզի որ՝ դուք խաւար կոտեղծէք. եւ կարող էք այդ հրաչքը գործելու։ Ձեռք ձեռքի տանք ու լոյս սփռենք՝ եղբայրնե՛ր. ոլոր մոլոր դարձող ջղիկներու չը նմանինք։

Ո՞ր ախնէքը պիտի հաւատայ քեզի Ապրօ՛, երբ «որքան տղայ, այնքան դասարան կայ» ըսելով, ինքզինքդ անճարպիկօրէն խայտառակ կը նես։ Թէպէտեւ թիւերու հետ գործ չունինք, սակայն մեր դպրոցին մէջ ոչ թէ 15-20 այլ լման 30 հատ աշակերտներ կը գտնուին. մեզ համար «ընդունակ» աշակերտներ ամէն բաներ վեր են։ Ատոնք են դպրոցի մը կենդանի վկաները։

Ապրօ՛, դուն կը խոստովանիս թէ մեր դպրոցը «ընդունակ» աշակերտներ կը գտնուին, թէ մեր կրթարանը «փառաւոր տուներու» մէջ, թէ եւրոպական երեք կարեւոր լեզուներ կը սորվեցնենք եւ թէ սուրբ գրոց դասեր կուտանք։ Ձեր հալածանքը մեզ պատիւ կը բերէ։ Խեղճ Ապրօ, խամրոցի մէջ ընդունակ աշակերտներ տեսնելը. վառած փուռի մէջ բացուած, ծաղկած վարդի տունկեր տեսնելու չափ հակառակ բաներ են։ Զիջում բրէ եւ ընդունէ՛ որ բողոքական երկիրներու մէջ դասախօսութիւնը գրեթէ կատարելութեան հասած է։ Այսօր Հայաստան եւ փոքր Ասիոյ ամէն կողմ գօլէճներ եւ բարձրագոյն վարժարաններ լ'ցուած են լուսաւորչական ազգայնոց գաւակներով։ Այդ գօլէճները ժամանակին հալածուեցան մոլեռանդ եւ նախապաշարեալ ժողովուրդին ձեռքով։ Իսկ այսօր նոյն հասստատութիւնները

Հայ ազգին ճակատագիրը որոշելու սահմանուած Նուիրական վայրեր են։ Ինչո՞ւ ուրեմն Ապրօ. փոխանակ ժողովուրդին մէջ եղբայրասիրութեան եւ ազատամտութեան վեհ զգացումները մշակելու, մոլեռանդութեան, կրօնքի խտրութեան եւ ատելութեան կայծերը կարծարծես։ Ամիկայ աններելի հրձիգութիւն մըն է։

Լաւ գիտէիր որ մեր գպրոցին մէջ կատարեալ ազատութիւն կայ, եթէ աշակերտը ուզէ ժողովարան կերթայ, եթէ ուզէ չերթար. ի՞նչու քու գիտութեանդ հակառակ կը խօսիս։ Բռնութիւնը հալածողներուն յատուկ է։ Մենք անկախ համազում կը մշակենք. մանաւանդ որ մեր ու մեր աշակերտներուն գացած տեղերը, մեր անուան ու մականուան չափ յայտնի տեղեր են։

Պիտի չը մոռնամ ըսել որ Ապրօ՛ «Ազգային կրթութիւն» ըսելով ժողովուրդին խոհեմ դասակարգին բան մըն ալ չէք կրնար կլլել տալ։ Ի՞նչ է ազգային կրթութիւն. միթէ երկու երեք երգ երգե՞լ է ազգային կուչուած կրթութիւնդ։ Մի խաբուիր, երգով, եղանակով՝ Հայաստան չազատիր։ Ապրօ՛, սովէ՛ եւ պատմէ՛ քու արբանեակներուդ որ առանց մարդասիրական կրթութեան, ազգային կրթութիւնն սկզբնապէս անկարելի է։ Հայաստանը հայու կարօտ չէ. Հայաստանը ՄԱՐԴ հայու կարօտ է։ Մարդ կրթելու ճարը գիտէ՞ք, անիկայ պատմեցէք ժողովուրդին. առանց բարոյական ոյժ մը ապահովելու, իւրացնելու, բիրտ ոյժ գործածելու խաբուսիկ երազներովը մի տառապիք. լաւ գիտցէք որ Ինչ որ ալ գըրէք, ինչպէս որ ալ դրէք, ժողովուրդը ձեր բառերուն չը պիտի խաբուի. անոնք խօսքերուն հետ մարդ եւ խրատներուն հետ վարք ու բարք կը փնտռեն։

Խելքս չը հասաւ բայց, Ապրօ՛, ինչպէ՞ս ելար, «տեղի ունեցածները աղայական բաներ էին» ըսիր, հանդէսին մէջ խօսուած տրամախօսութեան վրայ առանց տեղեկութիւն մը տալու. Միթէ ժողովուրդը «տէվէ՞» կարծեցիր եւ անոր բերանը ուզածդ նետելու աշխատեցար, նայինք թէ ժողովուրդն ալ քու բերնէդ ելածը «փէրմանդի պէս պիտի ընդունի։ Դոնէ՛ Հերովդէսին դերը հասկնայիր. անոր մէջ շատ բաներ ըսուեցան արիւն ծծող թագաւորներու մասին։ Ուրեմն զարմանալի չէ որ Եւրոպական քաղաքականութեան մասին ըսուածն ալ չես ըմբռնած. շատ պարզ էր սակայն մեր ըսածը։ Եւրոպան քրիստոնէական քաղաքականութեան մը չը հետեւիր. քանի որ քրիստոնեայ եւ մարդասէր կարծուած Եւրոպացիին թնդանօթը արդարութեան համար չը գոռայ, անշուշտ թուրքին ու քուրդի «քէօր» դանակը «քէսքին խըլըճ» եղաւ. այս իմաստով եւ այս բառերով եղած ա. տենախօսութիւն մը ծաղրելու չափ նենգոտելը՝ սարսափ կազդէ վրաս։

Իսկ կուգայ Ապրօ, որ գուն ուրիշին վիզէն կախուած բոժոժիկ մը ես, որ կամքիդ ու խղճիդ հակառակ ելար այդպիսի զօղանջիւն մը թող տուիր բապարակը։ Կը յուսամ թէ ամբոխապետդ քեզմէ շատ գոհ մնաց։

Վերջապէս Ապրօ քիչ մը զգաստանալու եւ մեր տուած կրթութեան վրայ ալ փոքրիկ գաղափար մը կազմելու համար՝ միւս անգամ ինձի եկուր, եւ մեր՝ այդ «ընդունակ» աշակերտներուն արտասանած ճառերէն Հայն ու Հայաստան եւ Մարդն ու նկարագիրը գլխուդ վրայ կարդամ. գուցէ այն ատեն պիտի հասկնաս որ «խթանի դէմ կից զարնելը», մարդու գործ չէ։

Հայկ Ե. ԵաՀտմեան

25 յունվար 1903

Թիֆլիս

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հաճեցէք հրատարակել ձեր պատուական թերթին յառաջիկայ թուոյն մէջ Արմ. տէր Սարգիս Ղ.սրիրեան հոր ձեռամբ Ռուսիոյ մէջ կատարած հանգանակութեան ներփակ ցուցակը.

Նովարոյսիսի քաղաքին հանգանակուած

Յովհաննէս Էլմասեան, 5 ռուբլի Երիվանցի տղայք ի Նովիզավոտ Ա. քաղաքում 25 ռուբլ. գումար 30 ռուբլի.

Էքաթերինոսարին հանգանակուած

Ա.Սեսեան 100 ռուբլի. Եղբարք Թորոսեան, 150 ռուբլի. Զերաղեան Խարախբալեանց 50 ռուբլի. Ա. Թէմիրճեանց, 10 ռուբլի Սարգիս Խարագիւլեանց 25 ռուբ. գումար 335 ռուբլի.

Թիֆլիզ քաղաքին հանգանակուած

Մութաֆով (Մանթաշով քէրվանսէրոյ թիւ 135) 25 ռուբլի Տօքթօր Վահան Արծրունի 5 ռուբ. Պանքէր Փիթոյեանք 50 «

« Ի տնօրէն Ա. Փրիտօնեան 10 ռուբլի, Պանքէր Փիթոյեանքի գրագիր Արարատեան 5 ռուբլի Իգ. Տէրեան 10 ռուբլի Տ. Էնք 5 ռուբլի Ա. Մէլիքազարեան 40 ռուբլի, Էնֆիէճեան, ծխախոտի գործարանատէր 10 ռբլ. Մօիսէ Մարտիրոսեան 5 ռուբլի Հայ ՈՄՆ 5 ռուբլի ՈՄՆ Վ.ի Արսէն Էքսբանիկից 15 ռուբլի Պ. Ց. Արսլանեան 5 ռուբլի, Աբգար Յովհաննէսեան 10 ռուբլի Ա. Աւլէքսանեան 10 ռբլ. Մ. Թաւատեան 10 ռբլ. Ա. Միրիմանեան 5 Պօղոս Ղամբարեան 10 ռուբլի Տիկին Եկիսաբեթ Միրզաեան 20 Եղբարք Դէորգեան 10 ռուբլի, Յարութիւն Միսիրեան 10 ռուբլի ՈՄՆ 5 ռբլ. Ա. Կիւլպէնկեան 10 ռբլ. Մօփուս (պարսկահայ մը) 1 ռբլ. ՈՄՆ, (Նշան Սիմոնեանի ձեռամբ) 11 ռուբլի Տօքթէօր Աղամալեան 5 ռբլ. Տիկին Զըթախեան 10 ռբլ. Բժշկապետ Դաւասարդեան 5 ռբլ. Մանասլեան 5 ռբլ. գումար 342 ռուբլի.

Ռասբոլկն հանգանակուած

Եղբարք Յունանեան 50 ռուբլի

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Սեւ, դաժան մութը պատել էր աշխարհին։ Երկինք ու երկիր իմ թանձած միապաղաղ սեւ գանգուած էր ներկայացնում։ Ես կանգնած էի, բայց ո՞ւր ինքս էլ չը գիտէի. Իրականութեան մէջ թէ երազում էի գտնվում, այդ էլ չէի կարողանում որոշել։ Ցանկարծ, բնազդմամբ ոտքս շարժեցի. այդ շարժումից ոտքս մի քարի կտորի հանդիպեց, որը գլորվեց դէպի վար։ Քարի գլորումը տեւեց մի երկու վայրկեան եւ դրանից ես հասկացրի որ գտնվում եմ ոչ է խորխորատի բերանին, ու մի անզգոյշ քայլը կարող է ինձ կեանքից զրկել։

Երեւակայութեամբ անդունդի մէջ ընկնելու տպաւորութիւնը սարսափելի եղաւ. մարմինս փշաքաղվեց. քրանքի ոտը կաթիլները, փոքրիկ գնդակների ճնշումով, սկսեցին ճակատիցս վար սահել. ես մի քանի անգամ կեանք տուի, կեանք առայ։

Բարեբախտաբար բնութիւնը գթած ինձ. յանկարծ մի ուժեղ քամի բարձրացաւ, փարատեց խաւարը ու հորիզոնում դուրս սողաց լուսինը անտարբեր վեհափառութեամբ։ Լուսաւորվեց և անդունդը, ու իմ առջեւ բացվեց մի զարհուրելի տեսարան։

Անդունդի մէջով գալարվելէն սոսկում էր մի թանձր կարմիր հեղուկ։

— Անշուշտ հայոց աշխարհի ձորերից մին է, անցաւ մտքովս, և այս կարմիր գետը հայ արիւնից է կազմվել. ծերերի, կանանց, մանուկների արիւնից։

Տեսողութիւնս ամբողջովին լարելով աչքերս մխեցի հեղուկի մէջ. Նրանում լողում էին մեծ ու փոքր գլուխներ և մարմնի մասեր։

— Հայ գլուխներ են, ձեռքեր և ոտքեր, կտրված թուրքի, չերքէզի, քրդի սրելով, գաշոյնով ու կացինով։ Հեռանամ այս տեղից, չշնչեցի. հեռանամ, որովհետեւ այս տեղ մահն է թագաւորում ու ջրի տեղ արեան գետ է վազում։

— Ո՞ւր ես փախչում, վատասիրտ հայ։ Իջիր վար. խմիր այս արիւնից, որ քաջերից է թափվել. Զօրաւոր և ուժով կը լինես. գազան կը դառնաս։ Եւ ժամանակ է որ ամէն մի հայ գազան լինի։ Լավեց անդունդի միջից։

Սարսափահար անդունդի մէջ նայեցի։ Ինձ թւաց որ կարված, արեան գետի մէջ լողացող գլուխներից մին է ինձ ձայնում։ Բայց եւ այնպէս նայեցի դէպի վար. անդնդի կրծքին կանգնած էր մի ալեւոր ծերուկ. նրա սպիտակ գանգուրները փայլում էին արծաթի պէս, բարձրահասակ էր եւ պատսպարված վարդի պէս կարմիր զգեստների մէջ։ Աչքերը փայլում էին զոյգ աստղերի նման։ Նա ակնածելի էր շատ եւ պատանու պէս առոյգ։

— Ո՞վ ես դու, ծերուկ պատանի, դահիճ է՞ս, ի՞նչ։ Արդեօք այս արեան գետը քո զոհերի արիւնից է կազմվել։ Ի՞նչ ես չինում այս մարդկային սպանդանոցում։ Հարցրի ես։

— Ո՞վ եմ ես։ Ազատութեան Ուղեցոյցը։ Իսկ այս արիւնահոս անդունդը ստրուկ ժողովրդների Ազատութեան Ճանապարհն է։ Չէ եղել մի գերի ժողովուրդ որ առանց այս ճամբովը անցնելու կարողանար իր ազատութիւնը վերստանալ։

Մի փախչիր. քանի որ այստեղ ես եկել, եկ տանեմ քեզ այս ճանապարհով. հասցնեմ քեզ Ազատութեան կրճին, որ տեղից այս կարմիր հեղուկը սեղմվելով, ուռչելով դէպի ազատութիւն է թռչում։

— Ոչ, ծերուկ. սարսափելի է քո Ազատութեան Ճանապարհը. քստմնելի է այս արեան գետը, անուելի է այս սպանդանոց անդունդը. ես անկարող եմ այդտեղ իջնել. անկարող եմ արեան ու դիակների ետեւից գնալ դէպի Ազատութիւն...

— Եկ, ստրուկ հայի զաւակ. արեան գետի մէջ լողացողները քո քաջ հայ եղբայրներն են. նրանք քո հայրենիքի փրկութեան կարապետներն են. իրենց սեփական արեան մէջ լողալով ձեր ազատութեան ճամբան են հարթում. դու մի մտիր արեան գետի մէջ, որ փրկութեան աւազանն է. ես քեզ գետի կողքովը կը տանեմ։

Համաձայնեցի ու սկսեցի վար իջնել անդունդի մէջ. ծերուկը առաջ վազեց. գիմաւորեց ինձ եւ թեւիցս բռնելով, սկսեց ինձ տանել դէպի առաջ։ Լուսինը աւելի բարձրացաւ ու լուսաւորեց Ազատութեան Ճամբան, արեան գետը. գետում լողացող գլուխների մէջ ինձ ծանօթ հայ դէմքեր երեւացին եւ ես ուզում էի ծերուկի հետ խօսել այդ մասին, երբ նա ինձ նկատեց.

— Ի՞նչ ես միայն արեան գետին նայում. շուրջդ էլ դիտիր։

Ծերուկին հնազանդեցի. շուրջս ամէն տեղ մարդկային մսաթափ, շորացած ոսկրներ էին թափված. գանգեր, բազուկներ եւ սրունքներ։ Սարսռեցի։

— Թո՛ղ ինձ, ծերուկ։ Չեմ կարող քեզ հետ դալ. չեմ ուզում տեսնել Ազատութեան կիրճը. դիմեցի ծերուկին։

— Գնանք ստրուկ հայ. այս ոսկրները Ազատութեան ճամբով գնաց ազգի ազատասէրների ոսկրներն են. մի մի կոթողներ ազատութեան համար կանգնած. երբէք չեն մաշվի. երբէք չեն փլուի. երբէք հող չեն դառնայ. Դրանց արիւնից կազմված գետը վաղուց չորցել է. դրանց յաջորդները արդէն ազատ են։ պատասխանեց ուղեցոյցը։

— Թող ինձ ծերուկ. այստեղ միայն արեան ու մահու հոտ է փչում։ Հոգ, քար եւ օդ արիւն ու մահ են փչում. չեմ ուզում այս ճամբովը գնալ։

— Գնանք, հաւաքիր ուժերդ. դիմացիր. քիչ մնաց. ահա, լաւ դիտիր, կիրճը երեւում է. միւս կողմն էլ է երեւում. լուսաթաթաղ մի տարածութիւն։ Այնտեղ միշտ արեւածագ է։

Ծերուկին քայլերը արագացրեց ու ինձ քարշ տուեց իր ետեւից։ Եւ իսկապէս մնք հասանք մի նեղ կրճի, որի երկու կատարները գրեթէ իրար միացած հազիւ մի նեղ ճեղք էին թողել. կրճի դէմ արեան գետը ուռչելով, գալարվելով, փրփրելով, սեղմվելով սահում էր դէպի միւս կողմը։ Կրճի կատարի ճեղքից հազիւ նկատել կարողացայ մի լուսավառ տարածութիւն, ողողված կենսարար լոյսի բոլոր գոյներով։

— Ահա այնտեղ է Ազատութիւնը. տեսնում ե՞ս. ասաց ծերուկը.

— Տեսնում եմ. ես էլ եմ ուզում այնտեղ գնալ. ազատ լինել. պատասխանեցի ես եւ ապրել այն լոյսի մէջ.

— Գնա, միայն այս արեան կատաղի յորձանքի մէջ պէտք է ընկնես. ուրիշ ճամբա չը կայ. եւ էլ չես կարող դառնալ, որովհետեւ ես եւ դարձնելու պաշտօն չունեմ.

ՎԱՐՈ

Ակռայեան 5 բուպլի Ոսն, Նոյն վաճառատան մէջ 1 բուպլի. Յովսէփեան 5. բպլ. Յ. Արամանեան 6 բուպլի.Ընկ. Յոհաննեան 5 բպլ. Զաբլմէեզան 25 բուպլի. Պալեան 10 բպլ. Խաչակ Թօփալեան 5բ. Յ. Կարակեան 5 բուպլի Եակօեան 5 բուպլի Զէրնօվեան եղբարք 10 եղբարք Ֆէօռօղլուեան 10 բուպլի Անպէտեան Անանեան 25 բուպլի Աղդբեան 5 բուպլի եղբարք տէր Յարութիւնեան 5 բպլ. Մաթէոսի, 2 բուպլի Ղազարեանցի 1.50 բպ. Վասիլ Բօրօֆ 2 բպլ. Քայեանց 2 Յարգիս Քուրչեանց 5 բուպլի. գումար 189.50 բուպլի

Արմաւիր քաղաքին հանգանակուած

Բ. Դասպարեան 25 բուպլի եղբարք Սէֆէրեանց 30 բուպլի Յովսէփ Կուսիկեանց 5 բուպլի այրի Տիկին Ասլանեան 10 բուպլ. Յարութիւն Թորոսեանց 25 բուպլ. եղբարք Ճամալեանց 15 բուպլի Առաքել Օհանեան 5 բուպլի զա Քուսչիքովա 3 բպլ. Նիկողոս Շահնազարեանց 25 բուպլի Մելքոն Սարգիսեանց 20 Աւետեան (Արմաւիրում) 25 բպ. Ս. Բաբաեանց 25 բպ. Յունանեան Աղաբէկեանց 25 բպ. Ալավէրտեան 5 բպ. Դասպար Մուրատ Զայեան 20 բուպլի եղբայր Թավէտեան 5 բպ. Յովսէփ Զաչօփէնց 25 բպ. Մատթէոս Գուրչեանց 10 բպ. Պետրոս Դասպարեան 10 բպ. Յովհաննէս Էկորեանց 25 բպ. Մելքոն Այվազօֆ 10 բպ. Մարիամ Խէմիրեանց 10 բպ. Գաբրիէլ Այվազեան 22 բ. գումար 380

ՕՏԷՍԱ քաղաքին հանգանակուած

Գրիգոր Նազարօֆ, բժիշկ 25 Առաքել Յունանեան 20 բուպլի Զարեհ Յ. Սարգիսեան 10 բուպլի Լ. Գաբաչեան 10 բպ. Ս. Աստուածատուրեան 20 բպ. գումար 85 բուպլի

ՊԱԹՈՒՄ քաղաքին հանգանակուած

Արաքս խմբի կողմէն 27 բուպլ.

ԸՆԴԱՄԷՆԸ

Արմաւիրէն	380	բուպլի
Օտէսայէն	85	«
Պաթումէն	27	«
Նովոսոյիֆֆէն	30	«
Էֆաթերիսօսարէն	335	«
Թիֆլիզէն	342	«
Ռաստովէն	183.50	
Գումար	1388.50	

—ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ—

Թաղական խորհրդոյ կողմանէ յանձնուած տէր Սարգիս հօր առ հաշիւ 150 բուպլի տէր Սարգիս հօր ներկայացուցած ընդհ. ծախս (221 բպ. 46 կոպէկ) բպ. 71 46 221 46.

Զուտ արդիւնք հանգանակութեան բուպլի 1167.04

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Ս. Գաբրիէլեան Յ. Մ. Թովմասեան

Հանգանակիչ քահանայ

Սարգիս Քահանայ Ղարիպեան

(ԿՆԻՔ)

Վառնա 28 յուն. 1903

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—o—

Ներկայիս կուգանք հրապարակաւ ծանուցանել թէ տիար Թորոս Փռիկեանի հրատարակչական հանդէսին մէջ պարոն Գալուստ Մարտիրոսեանի ձեռամբ ի նը-պաստ ընթերցարանիս կատարուած հանգանակութեան արդիւնքը՝ 7 լէվ 10 սանթիմ, շնորհակալութեամբ ստացուած է։

Վարչութիւն «Բաբկէն Սիւնի» ընթերցարանի

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքին վրայ փորձ ընողին դատը տեսնուեր է. երիտասարդ Խաչիկեան մահուան դատապարտուեր է. ինչպէս և փախած Գաբրիէլեան անունով մէկը. երկու ուրիշներ ալ մշտական բերդարգելութեան դատապարտուած են, իսկ հինգերորդ մը արդարացած է։

Խաչիկեան թէև խնդիրը անձնականի վերածած է բայց և յայտնած է որ պատրիարքը իր ազգական տէր Ներսէսեանին և պալատի քարտուղարներուն մէկուն ձեռքին մէջ խպալիք դառնալով ժողովուրդը կը հարստահարէ և անոր շահերը երբէք չը պաշտպաներ։

— Անցեալ շաբթու մէջ տեսնուեր է նաև Պալիոզեանը սպանողին դատը «Իսթինաֆ» դատարանին մէջ, Իզմիր։

Պետրոս Ազիզօֆ, դատապարտուեր է մահուան. Հայկ ցմահ բերդարգելութեան, Մինասմարգար և Ազնիւ աղատ արձակուած են։

Դատը թողուած է Պոլիսի «Թէմիզ» դատարանի։

—Հունգարիայի հայերը զարթնումի նշաններ ցոյց կուտան։ Դաշնակցական գործիչ մը Միքայէլ Վարանդեան յաջողեր է հոն հայերը շահագրգռել ազգային վիճակով, որուն հետեւանքը եղած է որ շատ մը ստորագրութիւններով դիմած են Աւստրո—Հունգարիոյ քանի մը երեսփոխաններու, որ երեսփոխանական ժողովին մէջ հայկական հարցի մասին հարցապնդումներ ընեն։ Նոյն իսկ փոքրիկ գումարներ ալ ղրկած են Դրօշակի խմբագրութեան։

— Քանի մը կարեւոր ու ազդեցիկ ֆրանսացիներ մօտերս մի թիթնկ մը պիտի սարքեն կառավարութ ան առաջարկելու համար որ հայկական խնդիրը Մակեդոնականէն չզատուի և երկուքի լուծումը միասին պահանջուի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Կառավարութիւնը զօրք կը հաւաքէ Մակեդոնիոյ մէջ. պատերազմի պատրաստութիւններ կը տեսնուին։

— Պոլսոյ ռուս և Աւստրիական դեսպանները կազմեր են Մակեդոնիոյ բարենորոգումներուն ծրագիրը և ղրկած են իրենց կառավարութիւններուն. երբ կառավարութիւնները հաստատեն այդ ծրագիրը, այն ժամանակ երկու դեսպանները զայն պիտի յանձնեն Բ. Դրան և գործադրումը պահանջեն։

Այդ ծրագիրը առանձին բան մը չի ներկայացներ և բաւարարութիւն չը պիտի տայ Մակեդոնացիներուն։

— Նոր վէկիլին դէմ էնթրիկներ կան. մայրաքաղաքի բարձր շրջանակներու մէջ լուր կը պտտի որ վէզիրը շուտով պաշտօնանկ պիտի ըլլայ։

—Իտալիոյ և Թուրքիոյ միջեւ նոր ընդհարում մը տեղի ունեցեր է. Բրէվէզայի մէջ թուրք ժանտարմաները իտալացի մը բռնաբարեր էն. իտալական կառավարութիւնը 5000 ոսկի տուգանք, ժանտարմաներու պատժուիլը և եանինայի վալիին ներողութիւնը կը պահանջէ Բ. Դռնէն։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պատերազմական նախարարը շրջաբերականով մը սպաներու խստիւ պատուիրած է ոչ մի կերպ չը մասնակցին մակեդոնական գործերուն։ Ամեն մի սպայ խիստ պատժի պիտի ենթարկուի. թէ պաշտօնը թողու և մասնակցի մակեդոնական ապստամբութեան։

—Այսօր Սոֆիայի մէջ պիտի ըսկսի մեղադրող նախարարներուն դատը։ Դատին պիտի մասնակցին բազմաթիւ դատաւորներ, 100էն աւելի վկաներ։ Մեղադրականը ընթերցումը միայն երկու օր պիտի տեւէ։ Դատին ներկայ պիտի ըլլան տոմսերով։

— Պուլկար բոլոր թերթերը համակրանքով կը խօսին հանգուցեալ Դարավէլօֆի մասին։

ՌՈՒՍԻԱ

Սեթերսպուրգի մէջ ցարը և ցարուհին կառքով մը զբօսնած միջոցնուն, քիչ կը մնայ որ երկու փոքրիկ մանուկներ կառքին տակը իյնան. ցարը իսկոյն կառքէն վար կը թռչի և գրէթէ ձիերու ոտքին տակէն կաղատէ մանուկներէն մին. իսկ երկրորդը արդէն ինքզինք, ազատած կըլլայ։

— Եւրոպական թերթ մը կը հաղորդէ որ ներքին գործոց նախարար Բլէվէին և ելեմտից նախարար Վիթէի մէջ համաձայնութիւն կայացեր է այս աշնան Զէմսթվոյի ներկայացուցիչներէն խորհրդատու ժողով մը կազմել երկրին կացութեանը մասին խորհրդակցելու համար։

ՆՅՄԱԿԱՏՈՒՓ

ԵՐԿԱԹ.— Ձեր բոլոր ղրկած թղթերը ստացուած են և մեր քովը կը գտնուին։

ՀԱՅ ՄՍԱ. ԱՃԱՌԱՆՈՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԹԱՆԵԱՆԻ

Պալըզ բաղար անկիւնի խանութը. թիւ 7

Կը ծախենք կովի, քըվըրճըքի միս, գեր և մասնաւորապէս լաւ տեղեր արածուած կենդանիներ կը մորթենք և շարունակ թարմ միս պատրաստ կը գտնուի մեր խանութը ամէն ժամանակ. Գին դիւրամատչելի և ուղիղ կշիռ։

4

ՖՐԱՆՍԱՑԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ ԼՈՒԻ ՆՈՒԱՌԻ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈԿԸ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ

Առաջին մասը լրացաւ

Երկրորդ հատորը սկսաւ հրատարակուիլ

Ամէն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան կելլայ (մէկ հատորի մէջ) եւ ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ։

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է՝ Վառնայի համար 1,25. ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի՝ 1,50. իսկ ամբողջութեանը բաժնեգրին է, Վառնայի համար 2,50. եւ Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանթիմ։

Այն քաղաքները եւ կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի տէն շաբաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի ղրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի ղրկուի փոստի ծախքը հրատարակչին վրայ է։

Փափագողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝

imprimerie Orientale, Onnik Parseghlan Varna

Դրամի փոխարէն նամակագրոշմ ալ կ'ընդունուի։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна